ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

20.05.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը - գլխավոր քարտուղար
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Մարգարյանը, Ն.Բարիկյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Վ.Ջաղինյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Շեկոյանը- մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանը ներկայացրեց տեղեկատվություն մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնում Նաիրա Բարիկյանի նշանակման վերաբերյալ: Այդ առիթով Լոռու մարզպետը շնորհավորեց Ն.Բարիկյանին պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, ցանկացավ հաջողություններ և բեղմնավոր աշխատանք, հույս հայտնելով, որ վերջինս իր մասնագիտական փորձառությամբ և կարողություններով կնպաստի մարզի կրթական, մշակութային և մարզական առաջընթացին՝ նպաստելով ոլորտի զարգացմանը, համակարգի բարեփոխումներն ու ծրագրերը հաջողությամբ իրականացնելու գործընթացին:

Ն.Բարիկյանը շնորհակալություն հայտնեց բարձր վստահության համար, վստահեցրեց, որ կներդնի առավելագույն ջանքեր մարզում կրթության ոլորտի արդյունավետ կազմակերպման և զարգացման համար ու պատրաստակամությունը՝ իր վրա դրված պարտականությունները պատշաճ կարգով իրականացնելու համար:

Մարզպետը հանձնարարեց կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն. Բարիկյանին անհրաժեշտ և պատշաճ վերահսկողություն սահմանել մարզային ենթակայության դպրոցների նկատմամբ, կապված «Վերջին զանգի» և ավարտական քննությունների կազմակերպման ու անցկացման հետ, որպեսզի հնարավորինս բացառվեն դրամահավաքը և նվիրատվությունները:

2. Մարզպետն իր դիտարկումներն ու տեսակետներն արտահայտեց պատասխանատու անձանց և ստորաբաժանումների ղեկավարներին տրված հանձնարարականների կատարման որակի, ժամկետների բացթողումների և գործավարությամբ սահմանված կարգի խախտման և պարտականությունների ու գործառույթների ոչ պատշաճ կատարման

հարցերի վերաբերյալ: Վերոգրյալի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց ստորաբաժանումների ղեկավարներին.

2.1 Անձնական պատասխանատվություն կրել փաստաթղթաշրջանառության պատշաճ և սահմանված կարգին համապատասխան պարտականությունների կատարման նկատմամբ, հանձնարարականները կատարել սահմանված ժամկետում, բացառել ուշացումները և անորոշ ու անիմաստ պատասխանները, դրանք նախապես համաձայնեցնել համակարգողների և ոլորտի պատասխանատուների կամ մարզպետի հետ:

2.2 Մարզպետը հանձնարարեց աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին՝ 1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն քաղաքացիների կողմից Վարչապետին առձեռն հանձնված դիմումների ընթացքի վերաբերյալ:

2.3 Մարզպետը հանձնարարեց խորհրդական Ն.Թովմասյանին՝ 1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վարչապետի այցի և մարզպետի կողմից իրականացված շրջայցերի ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի լուծման վերաբերյալ:

3.Մարզպետը հանձնարարեց.

Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝

3.1 Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքներում աղբահանության պատշաճ կազմակերպման և սանիտարական մաքրման նկատմամբ:

Աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն. Բարիկյանին, աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանին՝

3.2 Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների կազմակերպման և անցկացման նկատմամբ, ներկայացնել տեղեկատվություն ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման և մրցույթների չհայտարարման պատճառների վերաբերյալ:

Աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

3.3 Ըստ համակարգման ոլորտների անհրաժեշտ վերահսկողություն սահմանել համայնքների կողմից օրենսդրությամբ սահմանված գործառույթների իրականացման նկատմամբ:

3.4 Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել և մինչև ս.թ. հունիսի 25-ը ներկայացնել ոլորտային զարգացման և աշխատանքային իրագործելի պլաններ:

3.5 Յուրաքանչյուր ուրբաթ օրվա վերջում աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի

վարչություն ներկայացնել հաջորդ շաբաթվա ընթացքում խորհրդակցության ժամանակ քննարկվելիք օրակարգի հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

3.4 Անհրաժեշտ և անհատական վերահսկողություն սահմանել սուբվենցիոն և քաղաքաշինական այլ ծրագրերի իրականացման, դրանց որակի և ժամկետների պահպանման նկատմամբ:

Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա. Թումանյանին՝

3.5 Արտակարգ իրավիճակների (կարկտահարություն, ջրհեղեղ, երաշտ և այլն) դեպքում անմիջապես արձագանքել, տեղում ուսումնասիրերել իրավիճակը և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն վնասների չափի ու նախատեսվող փոխհատուցման միջոցառումների վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-05-23 13:58:35 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99